




Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Մույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1531  
17 FEB 2010

„ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ“  
ԽՍՀՄ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԺՈՂՎՈՐԻ  
ՏՆՂԱԿԱԼ՝ ՅԵ. Գ Ե Ն Կ Ի Ն  
13-ին հունիսի 1932

„ՀԱՄԱԶԱՅՆՅՈՒՄ ԵՄ“  
ԽՍՀՄ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԻԿԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀԱՆՈՒՄԻ ՄԱՍԻՆ  
ԵՄՈՒՄ ԵՄ Զ Ո Ւ Յ Կ Ա Յ Ե Վ

## Հ Ր Ա. Հ Ա Ն Գ. № 229

«ՀՆԳԱՄՅԱԿԻ ԶՈՐՐՈՐԴ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՏԱՐՎԱ» ՊԵՏԱԿԱՆ  
ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԱԶԳԱՅՆԱԶՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՏԱ-  
ՐԱՄԵԼՈՒ ՎԵՐԱՏԵՐՅԱԼ:

(Հրատարակվում է ԽՍՀՄ Կենտրոնականի և Ժողովրդային  
փոխառությունը բաց թողնելու վերաբերյալ վարչման հիման  
վրա):

«Հնգամյակի չորրորդ տարածական տարվա» փոխառության  
կոմունիստական կուսակցության ղեկավարության մեջ, ինքուստրաց-  
ման քաղաքականության հիման վրա, դասակարգային թշնամու  
հետ տարած անհատ պայքարում խորհրդային միության բանվոր  
դասակարգը և աշխատավորությունը մեծագույն հաղթանակներ  
ձեռք բերին մեր յերկրում սոցիալիզմի կառուցման գործում:

Այդ հաջողությունների հիմքը հանդիսանում է սոցիալիստա-  
կան խոշոր ինդուստրիայի սեփական պատվանդանի ստեղծումը,  
գյուղատնտեսության արժատական բեկումը դեպի սոցիալիզմ, կու-  
լակության միջոցառումները դասակարգի հաջող լիկվիդացիան համատարած  
կոլեկտիվացման հիման վրա:

Հնգամյակի յերրորդ տարածական տարում մեր յերկրում ա-  
վարտված է սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցումը:  
Այս հաղթանակը նշանակում է, վոր լենինյան «ուժում» հարցը լուծ-  
ված է հոգուս սոցիալիզմի լրիվ և անվերադարձ կերպով ինչպես  
քաղաքում նույնպես և գյուղում:

Սոցիալիստական շինարարության հաջողությունները ձեռք են  
բերված բացառապես ներքին միջոցների հաշվին:

Ի հաշիվ սոցիալիստական կուսակցության հզոր աղբյուրների,  
թիվում նաև աշխատավորության լայն մասսաների միջոցների պե-  
տական փոխառությունների միջոցով ներգրավելու ճանապարհով:

Պետական փոխառությունների միջոցով սոցիալիստական շին-  
արարության համար ֆինանսավորելու մեր յերկրի աշխատավորների  
մասնակցելու հանդիսանում է ժողովրդական անտեսության շինա-  
րարության լայնների կատարման երկար պայմաններից մեկը:  
խորհրդային պետական փոխառությունների (պետական փոխառությունների) հաջողու-  
թյունները հանդիսանում են աշխատավորական լայն մասսաների



ՇՐՋԳՈՐԾԿՈՄՆԵՐԻ, ՇՐՋՖԻՆԻՍԱԺԻՆՆԵՐԻ ՅԵՎ  
ՇՐՋԽՆԱՅԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ստեղծագործական վոգելություն, նրանց կողմից դեպի կոմունիստական կուսակցություն ու խորհրդային կառավարություն քաղաքականությունը տաժած անսպառ վստահության վկայությունը:

Խորհրդային կառավարության կողմից 1932 թ. բաց թողնված «Հնգամյակի չորրորդ ամարտական տարվա» փոխառությունը սոցիալիստական շինարարության մեջ ներդրված հզոր գանձ է, փորն ոգնում է կատարել հնգամյակի ամարտական տարվա շինարարության հսկայական պլանը՝ ծավալուն սոցիալիստական հարձակումը պլանը:

Նոր փոխառությունը կ'արագացնի առաջավոր տեխնիկայի ներմուծումը ԽՍՀՄ ամբողջ ժողովրդական տնտեսության, այդ թվում և գյուղատնտեսության մեջ, կը նպաստի սոցիալիստական շինարարության հետագա ամրապնդմանը, փորը լուծարել յե յենթարկում մարդուն մարդու միջոցով շահագործելու հիմունքներն ու ակունքները, կարագացնի կուլակության, փորպես դասակարգի, վերացման ամարտումը՝ համատարած կոլեկտիվացման հիման վրա:

Նոր փոխառությունը հանդիսանում է մինչև այժմ բաց թողած փոխառություններից ամենախոշորը: Այդ նոր փոխառության գումարը սահմանված է 3 միլիարդ 200 միլիոն ռուբլի:

Փոխառությունը գյուղացիության մեջ իրացնելու կամպանիան պահանջում է ամբողջ գյուղական հասարակայնության և ամբողջ խորհրդային ապարատի հատուկ ուշադրությունը:

Փոխառության կամպանիան անց է կացվելու յայտրեն ծավալված մասսայական աշխատանքի հիման վրա: Կամպանիանությունը նր հանդիսանում է փոխառության իրացման անսասան հիմունքը:

Փոխառության իրացման ժամանակ մոռականապես արգելվում է գործադրել վարչարարական ստիպման փորեն միջոց: Կամպանիան կանությունը յենթադրում է յայն կազմակերպվածություն, խորացրած մասսայական—բացատրական աշխատանք՝ փոխառության կամպանիան անցկացնելիս:

Միմիայն մասսայական աշխատանքի մեթոդները (սոցմրցում, համաձայնություն, հասարակական բուքսիր, շեֆություն, հանդիպական պլաններ, ֆինեստաֆետներ և այլն) կապահովեն փոխառության կամպանիայի հաջողությունը գյուղում:

Կոլտնտեսականը հանդիսանալով Խորհրդային իշխանության գլխավոր հենակետը գյուղում—լինելու յե առաջատարը փոխառություն իրացնելու գործում: Կոլտնտեսական հասարակայնությունը նո, գյուղի առաջավոր հասարակայնությունը պետք է յինի կազմակերպիչն ու առաջատարը վոչ միայն կոլտնտեսականների այլև անհատականների մեջ փոխառությունը տարածելիս:

1. Փոխառության տարածման կամպանիայի ընդհանուր դեկավարությունը և փոխառության կամպանիայի հաջող անցկացման պատասխանատվությունը շրջանում դրվում է շրջգործկոմների նախագահությունների վրա:

Փոխառության տարածման կազմակերպչական—ոպերատիվ և տեխնիկական աշխատանքն անց են կացնում շրջնայեղբարմարկդները՝ շրջգործկոմների ֆինանսական բաժինների անմիջական դեկավարությամբ: Շրջֆինբաժինների և շրջնայեղբարմարկդների վարիչները պատասխանատու յեն փոխառության տարածման հաջող ընթացքի համար:

2. Շրջնայեղբարմարկդները ապահովում են իրենց և գյուղականայեղբարմարկդների ապարատների ճիշտ և հաջող աշխատանքը շրջանի կոլտնտեսությունների նույնպես և ձեռնարկների, հիմնարկների և կազմակերպությունների փոխառության հարցում ոպերատիվ տեխնիկական սպասարկումը տանելու համար:

Գյուղխորհուրդների և կոլտնտեսությունների սպասարկումը, փորպես կանոն, դրվում է շրջնայեղբարմարկդների պետփոխառությունների սեկտորների վրա:

Գյուղական յնայեղբարմարկդներից վոչ պակաս 1-ին կարգի գործակալական յնայեղբարմարկդներից գյուղխորհուրդներին և կոլտնտեսություններին անմիջականորեն սպասարկելու համար ներգրավվում են միայն այն գյուղականայեղբարմարկդները, վորոնք իրենց կազմակերպչական դրությունը իսկապես կարող են ապահովել փոխառության աշխատանքների հաջող կատարումն:

Շրջնայեղբարմարկդը պարտավոր է սման գյուղի յնայեղբարմարկդներին և նրանց ամբողջված գյուղխորհուրդների և կոլտնտեսությունների ցուցակը:

Խնայեղբարմարկդների այն ապարատները, վորոնց վրա դրվում է փոխառության ոպերատիվ—տեխնիկական աշխատանքը, պետք է բազմակողմանի և հիմնովին հրահանգել և ծանոթացնել փոխառության տարածման պայմանների հաշվառման ու հաշվետվության տանելու կարգի հետ:

Շրջնայեղբարմարկդը պարտավոր է՝ գյուղխորհուրդների, կոլտնտեսությունների վարչությունների, ոժանդակ հանձնաժողովներին, գործակալներին և լիազորների փոխառության տարածման և նրանց աշխատանքի ամենորյա հրահանգում կազմակերպել նույնպես և ապահովել փոխառության կամպանիայում ներգրավված հիմնարկներին և կազմակերպություններին, ագիտ գրականությունը, բաժնեթերթիկներով, անհրաժեշտ ոպերատիվ նյութերով և այլն:

1008  
34335

ԳՅՈՒՂԵՈՐՀՈՒՐԳՆԵՐԻ ՅԵՎ ԿՈՆՏԵՍՏԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՎԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Փոխառութեան տարածումը գյուղում անց է կացվում գյուղխորհուրդների ղեկավարութեամբ և կոյտնտեսութեանների վարչութիւնների ակտիվ մասնակցութեամբ:

Գյուղխորհուրդները ղեկավարում են փոխառութեան տարածման կամպանիան իրենց տերիտորիայում ինչպես կոյտնտեսականների, նույնպես և անհատ գյուղացիների մեջ տանում են պարտատոմսերի տարածման գործը մենատնտեսների մեջ: Կոյտնտեսութեանների վարչութիւնները և կոյտնտեսութեան ոժտակող հանձնաժողովները հետ միասին կազմակերպում են փոխառութեան բաժանորդագրումը կոյտնտեսականների մեջ, ինչպես և անց են կացնում կոյտնտեսականների պարտատոմսերի դանձակումը դումարների մուծումներն ու պետաշխատողներին հետ կատարում են հաշվարկներ կոյտնտեսականների բաժնեգրութեան վերաբերյալ:

4. Յուրաքանչյուր գյուղխորհուրդ պետք է՝

ա) Բնակչութեանը լայն կերպով ծանոթացնի փոխառութեան կամպանիայի լողուններին հետ: բ) Գյուղխորհուրդի, կոյտնտեսութեան և այլն կից ոժանդակ հանձնաժողովներին միջոցով, ներգրավելով գյուղական հասարակայնութեան և առաջին հերթին կոյտնտեսական-ակտիվիստներին, կազմակերպել փոխառութեան մասնակցական աշխատանք: գ) Ապահովել գյուղական հասարակայնութեան և կոյտնտեսական ակտիվի ուժերի դասավորումը: զ) Առանձնացնել ակտիվիստներ, վորպես մենատնտեսների պարտատոմսերի վաճառելու գործակալներ, ներգրավել վորպես գործակալներ այն ակտիվիստներին, վորոնք հանձնարարվել են կամավոր ընկերութեանների ընկերների կողմից, գործակալներից գրավոր պարտավորութեաններ (ձև № 3 թերթիկ) մենատնտեսներին պարտատոմս վաճառելու մասին: Յե) Հետևել, վորպեսզի յուրաքանչյուր կոյտնտեսութեան վարչութիւն, իր վարչութեան անդամներից մեկի վրա զննի փոխառութեան աշխատանքը, հրահանգել կոյտնտեսութեան վարչութեան առանձնացրած անդամին փոխառութեան աշխատանքը տանելու նրանց պարտականութեանների մասին: 2) Կոյտնտեսութեանների վարչութիւնների հետ մեկտեղ առանձնացնել լիազորներ, գերազանցաբար կոյտնտ-ակտիվից, կոյտնտեսականների մուծումները հավաքելու, բաժնեգրներին ամբողջական տարոններ և պարտատոմսեր տալու համար: վերջինից յուրաքանչյուր լիազորից մուծումները հավաքելու գրավոր պարտավորութեան (№ 4 ձևի բլանկ):

Հրահանգել այդ լիազորներին և բացատրել նրանց մուծումները հավաքելու իրենց պարտականութեանների մասին:

ե) Ապահովել ազիտ-գրուկանութեամբ և բաժնեթերթիկներով ոժանդակ հանձնաժողովներին, ակտիվիստներին, լիազորներին և այլն:

5. Յուրաքանչյուր կոյտնտեսութեան վարչութիւն միջոցներ է

ձեռք առնում կոյտնտեսութեան կից գոյութիւն ունեցող ոժանդակ հանձնաժողովի ամբողջական համար, փոխառութեան շուրջը մասնակցական-բացատրական աշխատանք տանելու և կոյտնտեսականների փոխառութեան բաժանորդագրութեանն անցկացնելու, ակտիվ ոչնութիւն է ցույց տալիս ոժանդակ հանձնաժողովին ինչպես և ոչնում է ոժանդակ հանձնաժողովին փոխառութեան ինքիւրների շուրջը կոյտնտեսական հասարակայնութեան կազմակերպելու գործում:

Յուրաքանչյուր կոյտնտեսութեան վարչութիւն կոյտնտեսութեան մեջ փոխառութիւնը տարածելու աշխատանքի պատասխանատվութիւնը զննում է վարչութեան անդամներից մեկի վրա:

Կոյտնտեսութեան վարչութեան այդ անդամի վրա պարտականութիւն է դրվում—ա). Ամենորայ գործնական մասնակցութիւն ցույց տալ կոյտնտեսութեան կից ոժանդակ հանձնաժողովի աշխատանքներում: բ). Բաժանորդաթերթեր ընդունել ոժանդակ հանձնաժողովից, ստուգել այդ բաժանորդաթերթերը և խնայդրամարկներին հանձնել բաժանորդագրութեանը ձեւակերպելու համար:

գ). Հսկողութիւն ունենալ և ստուգել Գյուղխորհուրդի և կոյտնտեսութեան կողմից առանձնացված լիազորի կողմից կոյտնտեսականներից արվող դանձումների նկատմամբ, ինչպես և հետևել դանձումները լիազորների կողմից ժամանակին Գյուղխորհուրդին հանձնելու: դ). Հսկել և հետևել փոխառութեան բաժնեգրված կոյտնտեսականներին ամբողջական տարոններն ու պարտատոմսերը լիազորների կողմից բաժանելուն:

Կոյտնտեսութեան վարչութեան առանձնացված անդամը պատասխանատու ին նրան հանձնարարված փոխառութեան աշխատանքի համար ինչպես կոյտնտեսութեան վարչութեան նույնպես և Գյուղխորհուրդի առաջ:

ՇՐՋԱՆԱՅԻՆ, ԳՅՈՒՂԱԿԱՆ, ԿՈՆՏԵՍՏԱՆ ԵՎ ԱՅԼ  
ՈՒՄԱՆԴԱԿ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6. Գյուղխորհուրդներին և կոյտնտեսութեաններին կից ոժանդակ հանձնաժողովներին վրա դրվում է փոխառութեան մասնակցական ազիտ-բացատրական աշխատանքի պարտավորութիւն:

Շրջանի բոլոր ոժանդակ հանձնաժողովներին աշխատանքները ղեկավարում են շրջ. ոժանդակ հանձնաժողովները գյուղխորհուրդներին և շրջկոմիւթիւններին կից ոժանդակ հանձնաժողովներին միջոցով:

Գյուղխորհուրդներին կից ոժանդակ հանձնաժողովները կազմակերպում և ազիտ-մասնակցական աշխատանք են տանում մենատնտեսներին ինչպես և կոյտնտեսականների մեջ՝ փոխառութեանը տարածելու գծով:

Կոյտնտեսութեաններին կից ոժանդակ հանձնաժողովները ազիտ մասնակցական աշխատանք են տանում և փոխառութեանը բաժ-

նեղություն են անցկացնում անմիջականորեն կոլտնտեսականների մեջ:

Կոլտնտեսություններին կից ուժանդակ հանձնաժողովները ակտիվ աշխատանք են տանում նաև փոխառությունը մենատնտեսաների մեջ տարածելու համար, առանձնացնում են ակտիվիստ կոլտնտեսականներին անհատ գյուղացիներին բակերը չբնակելու համար, կոլտնտեսականներից, գյուղխորհուրդին գործակալներ և հանձնարարում մենատնտեսաների մեջ պարտատոմսեր տարածելու համար և այլն:

### ՀԱՍՏԱՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԵԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՆԻՄՅՈՒՆ

7. Գյուղխորհուրդներին և կոլտնտեսություններին կից ուժանդակ հանձնաժողովները տանում են փոխառության մասնաշաղկապազարգացման և ազդեցության բացատրական աշխատանքը ներդրումներով աշխատանքի մեջ գյուղական և կոլտնտեսական հասարակականության, կոմյունիստների, գյուղական բոլոր հասարակական և կոլտնտեսական կազմակերպություններին, պետական հասարակական հրահանգներին, ինչպես և ֆինանսական հասարակական ակտիվիստների հարվածայիններին:

Փոխառության աշխատանքում պետք է ներգրավվեն նույնպես բանվոր արձակուրդավորները: Պետք է ամրացվի կապը շեֆական կազմակերպությունների հետ, նրանցից փոխառության կամայանքն անցկացնելու, ակտիվ ոգնություն ստանալու համար:

Փոխառության տարածմանը մասնակցելու համար լայն կերպով ներգրավվում են կամայոր ընկերությունների կազմակերպությունները՝ ՄՊՊՐ, Սպորտհան, Կարմիր խաչ, ԿԱՆ-ը և այլն:

Կամայոր ընկերություններին չբնակելու կազմակերպությունները իրենց անդամների մասնաշաղկապ մորիլիդացիայի յեն յենթարկում փոխառության կամայանքի անցկացման համար:

Ղեկավարում են իրենց գյուղական բնակիչներին փոխառության հարցում, փոխառությունը տարածելու համար առանձնացնում են խորհուրդներ և այլն:

Ապահովում են չբնակելու թերթերի լայն կազմակերպական մասնակցությունը փոխառության կամայանքի:

Կամայանքի պետք է լուսարարմի նաև արտադրական և կոլտնտեսական թերթերում, յուրաքանչյուր Գյուղխորհուրդի, խորհրդատուության, խրճիթ-ընթերցարանի և այլ պատի թերթերում:

### ՓԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՆԻՄՅՈՒՆ ԱՆՅԿԱՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Փոխառությունը գյուղում տարածելու ժամկետները

8. Փոխառության կամայանքի գյուղում սկսվում է 1932 թ. հունիսի 10-ից, քաղաքի հետ մեկտեղ և տարածվում է այն հաշ-

վով, փորպեսզի մեկ և կես ամսվա ընթացքում ապահովված լինի յուրաքանչյուր կոլտնտեսականի և մենատնտեսի լրիվ ընդգրկումը փոխառությամբ:

### Մասնաշաղկապ աշխատանք

9. Փոխառության իրացումն անց է կացվում սոցմրցման և հարվածայինության լայն զարգացման հիման վրա: Սոցմրցումն անց է կացվում առանձին կոլտնտեսների, կոլտնտեսիկների, գյուղխորհուրդների և ակտիվիստների միջև: Լայն կերպով գործադրվում է նաև հասարակական բուքսի (աշխատանքի լավ անցկացնողների կողմից հետամնաց կազմակերպություններին առաջ քաշելու) և ֆինանսաֆետի մեթոդը:

Գյուղխորհուրդները գյուղական ուժանդակ հանձնաժողովներին հետ միասին մենատնտեսների մեջ անց են կացնում ազդեցության աշխատանք, հենվելով առաջին հերթին կոլտնտեսական սեկտորի, ՄՏԿ-ների և խորհրդատուությունների վրա: Փոխառությունը մենատնտեսների մեջ իրացնելու հիմնական մեթոդը լինելու չէ բոլոր տնտեսություններին այցելելու մեթոդը: Տնտեսություններն այցելելու գործում մասնակից են արվում գյուղական և կոլտնտեսական ակտիվից կազմած հասարակական բրիգադները:

Կամայանքի ամբողջ ընթացքում լայն կերպով կիրառվում է պարզեցացման մեթոդը: Պետք է կազմակերպել փոխառության աշխատանքում առաջ գնացող լավագույն գյուղխորհուրդի, խորհրդատուության, ՄՏԿ-ների ուժանդակ հանձնաժողովի ինչպես նաև առանձին բրիգադների և հարվածայինների հայտնաբերում, խրախուսել նրանց ակտիվությունը տեղում (չբնակելու կազմակերպությունների կողմից) պարզեցացմանը: Կամ կենտրոնին ներկայացնել պարզեցացման համար: Փոխառության աշխատանքի լավագույն որինակի համար պարզեցացման մասին, լայն կերպով լուսարարվում է ժողովներում, թերթերում և այլն:

Պարզեցացման միաստեղծ, ցույց տալով պարզեցացման կոնկրետ կազմակերպություններին ու անձանց, լայն կերպով հանրաշնչացվում է մամուլում:

Գյուղում կոլտնտեսականների մեջ փոխառության իրացումը տարվում է հետևյալ լոգոնով տակ՝ «Կոլտնտեսականը փոխառության իրացման հարցում հավասարվում է քաղաքի բանվորին»: Կոլտնտեսականը փոխառության բաժնեգրվում է իր, կոլտնտեսական տնտեսության և վոչ հանրաշնչացված տնտեսության մասի յեն-րեք շաբաթվա յեկամտի հափով» (բաժնեգրությունը անց է կացվում կոլտնտեսականի և վոչ կոլտնտեսականի ընտանիքի նկատմամբ):

Մենատնտեսների մեջ բաժնեգրությունն անց է կացվում «Յուրաքանչյուր մենատնտես ընտանիք փոխառությանը տալիս է վոչ պակաս իր յերեքշաբաթվա յեկամուտը»: Յուրաքանչյուր մենատնտես ընտանիքի բաժնեգրություն պետք է ապահովված լինի յուրա-

քանչուր չըջանի և դյուղի համար սահմանված ստուգիչ թվերով: Շրջինադրամարկի կողմից, ֆին. բաժնի մասնակցութեամբ կազմած փոխառութեան տարածման ստուգիչ թվերը հասցրվում են յուրաքանչյուր դյուղատնտեսին: Խիստ արդելվում են ստուգիչ թվերը դյուղական առանձին կոլտնտեսական թե մենատնտես աշխատավոր տնտեսութեաններին ինչպես և կոլտնտեսութեան հանձնելը:

### ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԿՈԼՏԵՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ ՄԵՁ ԻՐԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԵ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Կոլտնտեսականների կոլեկտիվ բաժնեգրութեան պայմանները

10. Կոլտնտեսականները փոխառութեան պարտատոմսեր ձեռք են բերում կոլեկտիվ բաժնեգրման կարգով: Կոլտնտեսականները պարտատոմսերի վճարումները կարող են կատարել ըստ իրենց ցանկութեան—միանգամ կամ ամսե-ամիս՝ մաս-մաս:

Վճարման ժամկետների տեվողականութուն կոլտնտեսականների համար տրվում են 6-8 ամիս—հաշվելով 1932 թվի հունիս 1-ից: Մաս-մաս վճարումների ճիշտ ժամանակամիջոցը 6 թե 8 ամիս լինելով չըջանի կոլտնտեսութունների տեղական պայմաններից վերջվում են տեղական շրջադրժկումի կողմից:

Կոլտնտեսականների բաժնեգրման առաջին մուծումը կատարվելու յե մինչև 1932 թ. ոգոստոս 1-ը, բաժանորդագրման 20%-ից վրջ պահանջարկով:

Բաժնեգրման գումարի մնացած մասը պետք են վճարվի յուրաքանչյուր ամիս հետևյալ չափերով՝

ա) Մինչև 1933 թվի հունվարի 1-ը (6 ամիս) ժամկետ տալու դեպքում—ամեն ամսյա հավասար մուծումներով, յայն հաշվով վոր մինչև սեպտեմբերի 1-ը բաժնեգրման գումարի 20%-ը դանձվի, մինչև հոկտեմբերի 1-ը 20 տոկոս, մինչև նոյեմբերի 1-ը 20 տոկոս, 10 տոկոս մինչև դեկտեմբերի 1-ը և 10 տոկոս մինչև 1933 թվի հունվարի մեկը:

բ) Մինչև 1933 թվի փետրվարի 1-ը (7 ամիս) ժամկետ տալու դեպքում, ամեն ամսյա հավասար մուծումներով՝ վոր մինչև սեպտեմբերի 1-ը դանձվի բաժնեգրման 15%-ը, 15%-ը մինչև հոկտեմբերի 1-ը, 15% մինչև նոյեմբերի 1-ը, 15% մինչև 1932 թ. դեկտեմբերի 1-ը, 10 տոկոս մինչև հունվարի 1-ը և 10 տոկոս մինչև փետրվարի 1-ը:

գ) Մինչև 1933 թվի մարտի 1-ը 8 ամիս ժամկետ տալու դեպքում ամեն ամսյա հավասար մուծումներով՝ վոր մինչև սեպտեմբերի 1-ը դանձվի բաժնեգրման 15%-ը, 15% մինչև հոկտեմբերի 1-ը, 15% հետագա ամիսներում մինչև 1933 թվի մարտի 1-ը, 10% ամեն ամիս:

Հաշվարկները պարզեցնելու համար յուրաքանչյուր մուծում պետք են վճարել կյորացնելով մինչև մեկ ուրբի:

11. Կոլտնտեսականների բաժանորդագրումն անց են կացվում միմիայն դրամական հաշվով, արդելվում են բաժնեգրութունը աշխ-որերով անց կացնել:

Կոլտնտեսականների բաժանորդագրման վճարումները կատարելու կարգը:

12. Կոլտնտեսականների բաժնեգրման մուծումների վճարումները կատարվում են ի հաշվի նրանց տնտեսութեան՝ գերադանցապես համայնացրած մասից ստացված յեկամուտները:

Վճարականապես արդելվում են, կոլտնտեսների վարչութեաններին վորպեսզի կոլտնտեսականների բաժնեգրման վճարումները կատարեն ի հաշվի կոլտնտեսութեանների միջոցների, ինչպես և բաժանորդագրման մուծումները կատարեն ի հաշվի կոլտնտեսականների հասանելիք աշխուրների:

13. Կոլտնտեսականներին պարտատոմսերը վճարվում են պարտատոմսի վրա նշանակված գնով:

Բաժնեգիրների իրավունքները

14. Առաջին մուծումը վճարելուց հետո բաժնեգիրը պարտատոմսերից շահման (փոխառութեան շահող մասից) և տոկոսային ձևի (տոկոսաբեր մասից) յեկամուտ ստանալու իրավունք են ստանում:

Այդ իրավունքը բաժնեգիրն ունի յայն դեպքում յեթե նա մուծումները ժամանակին են կատարում:

Շահող փոխառութեանը բաժանորդագրված ամբողջ գումարի պարտատոմսերը ամբողջվում են բաժանորդագրվողին, վորպեսզի մինչև վճարումների լրիվ ավարտման ժամկետը բաժանորդագրվողը կարողանա մասնակցել շահումների խաղարկութուններին, բաժանորդագրվողը ստանում են շահող փոխառութեան կցման տալոններ՝ իրեն ամբողջված պարտատոմսերի համարներով:

Բաժանորդագրվողին ամբողջված տալոնում մատնանշված համարին ու, սերիային ընկած շահումի վճարումը տեղի յե ունենում հենց վոր բաժանորդագրվողը խնայդրամարկին են ներկայացնում կցման տալոնը հաշվեկտրոնի հետ միասին, վորը բաժանորդագրողը ստանում են իր մուծումները գրանցելու համար: Այդ դեպքում հաշվեկտրոնը պետք են վավերացված լինի փոխառութեան կամպանիան անցկացնելու համար առանձնացված կոլտնտեսութեան վարչութեան անդամի կողմից: Շահումը վճարելուց հետո բաժանորդագրվողին վերագրվում են կցման տալոնը՝ շահումը վճարելու վերաբերյալ մակագրութեամբ:

Շահումը վճարվում են բաժնեգրվողին առանց պահելու պարտատոմսի արժեքը և բաժնեգրվողը շարունակում են, վճարել իր

բաժանորդագրած գումարի ամբողջ գումարը մինչև սահմանված ժամկետի վերջը:

Բաժանորդագրվողի կողմից բոլոր մուծումները վճարելուց հետո, նրան կցման տալոնների փոխարեն տրվում են տալոններով մատնանշված համարների պարտատոմսերը:

Կցման տալոնով չահում ստացած բաժանորդագրվողին, բաժանորդագրման բոլոր նվաճումներն ավարտելուց հետո տրվում է պարտատոմսը, վորից կտրվում է չահում ստանալու իրավունք տվող առաջին տալոնը: Եթե պարտատոմսով բաժանորդագրվողն ստանում է միայն պարտատոմսի խնդան արժեքը, վորը վճարվում է նրան 1936 թ. դեկտեմբերի 1-ից:

Կցման տալոնները կորցրած բաժանորդագրվողը չի կորցնում իրեն ամրացրած պարտատոմսերը ստանալու իրավունքը, վորոնց համարները պարզվում են տալոններ տվող խնայրամարկղում: Բաժանորդագրվողն ինքը, կամ ոժանդակ հանձնաժողովի միջոցով, կարող է ստանալ խնայրամարկղում իրեն կցած պարտատոմսերի համարների ցուցակը:

Քանի վոր փոխառության տոկոսաբեր բաժնի պարտատոմսերը չահումների խաղարկության չեն մասնակցում, այդ պատճառով այդ բաժնի պարտատոմսերը բաժանորդներին չեն ամրացվում և նրան վոչ մի տալոն չի տրվում:

Տոկոսաբեր բաժնի պարտատոմսերի ամբողջ արժեքը վճարելուց հետո բաժանորդագրվողն ստանում է այդ պարտատոմսերն իր հետ ունեցած բոլոր կտրոնների հետ միասին:

Կալսմեսությունից դուրս յեկող բաժանորդների հետ հաշիվներ կատարելը

15. Յեթե բաժանորդագրվողը դուրս է գալիս Կոլտեսեսությունից ապա պարտատոմսերի վերաբերյալ հաշիվները նրա հետ կատարվում է այս կերպ. ա) Բաժանորդը կարող է վճարել իր բաժանորդագրման ամբողջ գումարը և վճարված պարտատոմսերն ամբողջությամբ ստանալ. բ) Յեթե բաժանորդագրվողը բաժանորդագրման ամբողջ պարտքը չի մուծել, նրան պարտատոմսեր տրվում է մտցրած գումարի չափով, յեթե մինչև Կոլտեսեսությունից դուրս գալը բաժնեգիրը չահող բաժնի պարտատոմսով չահում է ունեցել, ապա նրա կատարած մուծումների գումարին նրան առաջին հերթին տրվում է այն պարտատոմսը, վորին չահում է ընկել: Յեթե այդ պարտատոմսը մեծ կուպյուրային է ապա բաժնեգրին խնայրամարկղի ավանդից տրվում է խաղարկության ժամանակ չահած մանր կուպյուրային պարտատոմսեր:

Յեթե բաժնեգրի մուծումների գումարը 10 ուրբու չի բաժանվում (առանց մնացորդի) ապա Բաժանորդագրվողը լրացուցիչ կերպով մտցնում է կանխիկ դրամով այն գումարը, վորն անհրաժեշտ է 10 ուրբլիանոց պարտատոմսի արժեքը լրացնելու համար:

Բաժանորդագրին վճարած պարտատոմսերն ստանում է Գյուլիստրոնի միջոցով: Դուրս գնացած Կոլտեսեսականների բաժանոր-

դագրման գումարի չվճարածի չափով պակասեցվում է և տվյալ Կոլտեսեսության անդամների բաժանորդագրության ընդհանուր գումարը: Հեռացվող բաժանորդագրվողն պարտատոմսերն ստանալուն պես պետք է վերադարձնի կցման տալոնները, վորոնք հանձնվում են խնայրամարկղին:

Ինչպես է անցկացվում բաժանորդագրությունը

Կոլտեսեսականների մեջ

16. Կոլտեսեսության կից ոժանդակ հանձնաժողովները բաժանորդագրությունն Կոլտեսեսականների մեջ անց են կացնում ինչպես ընդհանուր ժողովներում, նույնպես և ժողովներից դուրս Կոլտեսեսականներին այցելելու միջոցով: Այցելելու համար առանձնացվում են ոժանդակ հանձնաժողովի անդամները, հասարակական հրահանգիչները, ակտիվիստները:

Կոլտեսեսականներին հարցում անելու ժամանակ լրացված բաժնեթերթերը (ձև № 1) բաժանորդագրվող ինքն է վորոչում թե ինչ գումարի փոխարության բաժանորդագրվել: Բաժանորդագրման համար հայտարարած գումարը յուրաքանչյուր Կոլտեսեսական հաստատում է իր ստորագրությամբ բաժանորդագրութեթում: Բաժանորդագրվողը կարող է իր ցանկությամբ բաժանորդագրվել փոխառության կամ մյուս բաժնի ցանկացած պարտատոմսերին:

17. Բաժանորդագրությունն անցկացնելուց հետո ոժանդակ հանձնաժողովը լրացրած բաժանորդագրութեթը հանձնում է Կոլտեսեսության վարչության անդամին: Կոլտեսեսության վարչության անդամը պետք է ստուգի բաժնեթերթերը և առանց դանդաղեցնելու հանձնի Գյուլիստրոնից բաժնեգրումը ձևակերպելու և Կոլտեսեսականների մուծումների դանձումը կազմակերպելու համար:

Ոժանդակ հանձնաժողովը բաժանորդագրման վոչ մի դրամական հաշիվ չի կատարում:

Ինչպես է կազմակերպվում մուծումների գանձումը

Կալսմեսականներից

18. Կոլտեսեսության վարչության անդամը մուծումների գանձումը կազմակերպում է լիազորների միջոցով, վորոնք առանձնացված են Կոլտեսեսության և Գյուլիստրոնի միջոցով: Յուրաքանչյուր լիազոր, Գյուլիստրոնի № 4 ձևով պարտավորագիր է տալիս: Պարտավորությունն ստորագրվում է յերկու որինակ, մեկը տալիս: Պարտավորությունն ստորագրվում է յերկու որինակը ստանալով պահվում է վարչության անդամի մոտ, մյուս որինակը ստանալով է լիազորին: Պարտավորության մյուս յերեսին գետեղված է լիազորի անձնական հաշվի ձևը:

Լիազորի հավաքական մուծումները Գյուլիստրոնից դուրս և նրա անձնական հաշվում, յերկու որինակում են, մատնանշելով գումարը և լիազորից դրամն ընդունելու օրը: Լիազորի ձեռքում դրամավող պարտավորության մեջ գրված այդ գրությունը Գյուլիստրոնից վաճարացնում է նախագահի կամ քարտուղարի ստորագրությամբ:

ինչպես և գյուղխորհուրդը տանում կոլտնտեսության անդամների մուծումների հաշվառումը

19. Մուծումների դանձման ամբողջ ընթացքում, Գյուղխորհուրդը յուրաքանչյուր լիազորված ամբաստանող և բաժնեգիրների առանձին խմբեր:

Բաժնեգիրներից ստացվող մուծումների հաշվառման համար, Գյուղխորհուրդը բաժնեգրման թերթիկների հիման վրա կազմում և առանձին հաշվարկման տեղեկագիր (ձև № 5): Այդ տեղեկագիրը կազմվում և լիազորված կցված յուրաքանչյուր բաժնեգրի համար:

Միաժամանակ Գյուղխորհուրդը յուրաքանչյուր բաժնեգրի համար լրացնում և հաշվեկտրոններ ու նրա արժատը (ձև № 2): Հաշվեկտրոնները (և նրանց արժատները) համարակալվում են այն համարներով, վորի տակ հիշվում են բաժնեգրները հաշվեցուցակում:

Հաշվարկման տեղեկագրերը հավաքվում են մեկ տեղ և պահվում են Գյուղխորհուրդում, դրամական փաստաթղթերի պահման համար սահմանված կարգով:

Կտրոններն ու նրանց արժատները, մինչև լիազորներին հանձնելը, պահվում են Գյուղխորհուրդում առանձին առանձին ըստ կոլտնտեսության և լիազորի:

Առաջին մուծումը դանձելու համար Գյուղխորհուրդը լիազորվում տալիս և հաշվեկտրոններ և նրանց արժատները հաշվեկտրոնները բաժնեգրներին են տրվում նրանցից առաջին մուծումն ստանալիս:

Մուծումն ստանալուց հետո հաշվեկտրոններին արժատների լիազորները վերադարձնում են Գյուղխորհուրդին: Կտրոններին այդ արժատները տրվում են լիազորներին՝ հետագա յուրաքանչյուր մուծումների դանձման համար:

ինչպես և լիազորը հավաքում մուծումները բաժանորդներից

20 Բաժնեգրից մուծումը ստանալուն պես լիազորը գրում և հաշվեկտրոնում մուծման գումարը և վճարման օրը, իսկ կտրոնի արժատում՝ միմիայն մուծման գումարը: Կտրոնում լիազորը ստորագրում և մուծումը ստանալու համար:

Բաժնեգրը կտրոնի արժատում նշանակում և վճարման օրը և իր ստորագրությամբ վավերացնում և ինչպես մուծման գումարը, նույնպես և վճարման օրը:

Անգրագետ բաժնեգրագրվողի փոխարեն ստորագրում և մուծումը վճարելու ժամանակ ներկա գանվողներից վորեւ մեկը:

Գյուղխորհուրդները պարտավորեցնում են լիազորներին հետևելու, վորպեսզի բաժնեգրներն իրենց ստորագրություններով վավերացնեն կտրոնների արժատներում մուծման գումարները և նշանակեն վճարման օրը: Դա անհրաժեշտ և նրա համար, վորպեսզի գյուղխորհուրդները կարողանան ստուգել լիազորների հաշվառած դրամների ճիշտ ու ժամանակին հանձնումը:

ինչպես և լիազորը հանձնում հավաքած մուծումները գյուղխորհուրդին

21. Յուրաքանչյուր բաժնեգրից ստացած մուծումները լիազորը պարտավոր և հանձնել Գյուղխորհուրդին՝ դրամները ստանալուն պես 31 օրվա ժամկետից վաղ ուշ: Հաշվառած դրամները լիազորը հանձնում և Գյուղխորհուրդին՝ կտրոնների արժատների հետ միասին: Գյուղխորհուրդը կտրոններին արժատների հիման վրա ստուգում և լիազորի հանձնած դրամների գումարը և գրում և այդ գումարը լիազորի անձնական հաշվում (լիազորի ներկայացրած պարտավորության և Գյուղխորհուրդում պահվող պարտավորության օրինակների հակադիր յերեսին): Կտրոնների արժատներից Գյուղխորհուրդը բաժնեգրներից մուտք յեղած մուծումները գրում և հաշվեցուցակում (ձև № 5):

Փոխառության աշխատանքի համար առանձնացված կոլտնտեսության անդամը, նույնպես և Գյուղխորհուրդը և խնայդրամարկը, վորոնք ձևակերպել են կոլտնտեսականների բաժնեգրությունները, մշտական հսկողություն են տանում լիազորների աշխատանքի նկատմամբ, հետևում են մուծումների դանձումներին, ամբողջման տալոններ տալուն, իսկ հաշվարկների վերջում — բաժնեգրներին պարտատոմսերը հանձնելուն:

ինչպես և գյուղխորհուրդը ձևակերպում կոլտնտեսականների բաժնեգրությունը խնայդրամարկում և ինչպես և տանում նրա հետ բաժնեգրման հաշվարկները

22. Բաժնեթերթիկը հաշվելուց բաժնեթերթիկի հիման վրա լրացված հաշվային տեղեկագրերը (ձև № 5) կազմելուց, հաշվեկտրոնների և արժատների (ձև № 2) պատրաստելուց հետո Գյուղխորհուրդը բաժնեթերթիկը հանձնում և այն խնայդրամարկին, վորին ամրացված և նա փոխառության սպասարկման հարցում:

Խնայդրամարկը պետք և հետևել, վորպեսզի նրան կցված Գյուղխորհուրդները բաժնեթերթիկով ժամանակին պատրաստեն հաշվարկային տեղեկագրերն ու հաշվեկտրոնները (ու նրանց արժատները) և հանձնեն իրենց բաժնեթերթիկը և անցնեն առաջին նվազ մուծումը դանձելուն, այն հաշվով, վոր առաջին մուծումը բաժնեգրների կողմից վճարվի մինչև 1932 թվի ոգոստոս 1-ը:

Կոլտնտեսականների բաժնեգրության առաջին վճարը ստանալու ժամանակ խնայդրամարկը Գյուղխորհուրդին հաշվային կտրոն (№ 7 ձև) և տալիս: Այդ կտրոնում խնայդրամարկը նշանակում և Գյուղխորհուրդից կոլտնտեսականների բաժնեգրության մարման ղեկաց մուտք յեղող վճարումները:

23. Գյուղխորհուրդների կողմից, կոլտնտեսականների բաժնեգրության ղեկաց ստացած գումարների, հաշվառման և արդգումարները խնայդրամարկը հանձնելու կարգը ցույց են տրված հրահանգի հոդ. հոդ. 34-37-ում:

Ինչպես խնայողությամբ կանխիկ մուծած, նույնպես և պետություն խառութիւնները սեկտորին փոխառով փոխադրած գումարները պետութեան հաշիւները լինեն կոլտնտեսականները մուծումները № 5 ձևի հաշիւ-ցուցակի մէջ մտցրած ընդհանուր գումարին՝ առաջին դեպքում (դրամներն ամեն ուր խնայողությամբ կանխելու դեպքում) նախորդ որովայն ընդհանուր գումարին, իսկ յետագայ դեպքում (դրամները պետութեան խառութիւնները սեկտորին փոխադրելու դեպքում) նախորդ հնգորդակի ընդհանուր գումարին:

Հանձնած գումարները դրի յեն առնվում Գյուղխորհրդի հաշիւարկային կտրոնի (ձև № 7) 5-րդ ստանյակում—առաջին դեպքում գյուղխնայողությամբ կանխելու դեպքում, իսկ յետագայ դեպքում—Գյուղխորհրդի կողմից դրամ փոխան հանձնելու: Այդ դրամները հաստատվում են պետութեան խառութիւնների սեկտորի կողմից ստուգելուց հետո, նրան հաշիւարկային կտրոնը ներկայացնելու ժամանակ:

Պարտատոմսերի ամրացումը բաժանորդներին

24. Գյուղխորհրդից ստացած բաժանորդաթերթերի հիման վրա խնայողությամբ շահող բաժնի պարտատոմսերն ամրացնում են բաժանորդներին և ջնկում են տոկոսաբեր բաժնի պարտատոմսերը:

Ջնկած և ամրացման տալիսները ամեն մի կոլտնտեսութեան համար առանձին փաթեթի մէջ դրած, խնայողությամբ հանձնում են Գյուղխորհրդին:

Գյուղխորհուրդը հանձնարարում է լիազորներին բաժանունները տալիսները՝ բաժանորդներին՝ հերթական մուծումները ստանալու համար նրանց այցելելու: Բաժանորդը պարտավոր է ստուգել հաշիւները արժանի վրա՝ կցման տալիսներն ստանալու համար: Տալիսները բաժանելուց հետո Գյուղխորհուրդը կտրոնների արժանիքով ստուգում է այդ ստորագրութիւնների առկայութիւնը: Ինչպես պարտատոմսերի ամրացումը, նույնպես և կցման տալիսների բաժանումը բաժանորդներին պետի կատարվի այն հաշիւով, վորպեսզի մինչև խաղարկութեանը բոլոր բաժանորդներն և կցման տալիսներն ունենան իրենց ձեռքում:

Բաժանորդներին պարտատոմսեր տալը

25. Բաժանորդներին պարտատոմսերի ամրոյժ արժեքն ստանալուց և Գյուղխորհրդի հետ կոլտնտեսականների բաժանորդարարման հաշիւներն ավարտելուց հետո խնայողությամբ Գյուղխորհրդին ամբողջութեամբ հանձնում են վճարված և յուրաքանչյուր բաժանորդի համար առանձին փաթեթի մէջ դրված պարտատոմսերը: Գյուղխորհուրդը լիազորներին միջոցով պարտատոմսերն անմիջապէս բաժանում է բաժանորդներին: Յուրաքանչյուր բաժանորդ պարտատոմսերի դիմաց հանձնում է կցման տալիսները և հաշիւարկային կտրոնը (ձև № 2), ստորագրում է հաշիւարկային արժանի վրա՝ պարտատոմսերը ստանալու համար և ստուգում է շահող բաժնի

պարտատոմսերի համարները: Կցման տալիսները վրա մատնանշած համարները հետ: Կտրոնների արժանիքը՝ պարտատոմսերն ստանալու վերաբերյալ բաժանորդներին հանձնած կցման տալիսներն և հաշիւարկային կտրոնը լիազորը հանձնում է Գյուղխորհրդին: Գյուղխորհուրդը պարտավոր է ստուգել կտրոնների արժանիքով յուրաքանչյուր բաժանորդի կողմից պարտատոմսը ստանալու վերաբերյալ ստորագրութիւնների առկայութեանը: Կցման տալիսները հանձնվում են խնայողությամբ կանխելու դեպքում և նրանց արժանիքը նույնպես և հաշիւարկային կտրոնը (ձև № 5) պահվում են Գյուղխորհրդում յետո տարվա ընթացքում:

Այդ դեպքում, յետո կոլտնտեսականները բաժանորդարարման հաշիւները մաքրելու ժամանակ վճարում են պարտատոմսերի արժանիքը՝ արժեքը, Գյուղխորհուրդին ստանում է խնայողությամբ կանխելու վրա բաժանորդներին պարտատոմսերը և հանձնում է բաժանորդներին՝ հաշիւարկային արժանի վրա ստորագրութիւն առնելով:

Տնայնագործական արտադրական կապերատիվների անդամ գույացիների մեջ բաժանորդագրութեան անցկացումը

26. Տնայնագործ—արտադրական արտեղների կամ կոոպերատիվների անդամ մենատնտես գյուղացիների մեջ բաժանորդագրութիւնն անց է կացվում այն պայմաններին հիման վրա, վորոնք սահմանված են և կոլտնտեսականների համար: Արտեղների կամ կոոպերատիվների անդամների բաժանորդագրման հաշիւները դրվում են արտեղների կամ կոոպերատիվների վարչութիւնների վրա:

Արտեղի վարչութիւնը բաժանորդագրութիւնը ձեռնարկում է այն խնայողությամբ կանխելու, վորին ամրացված է արտեղը, կատարում է մուծումների դանձում բաժանելիքներին և պետաշխնայողությամբ կրդի հետ տանում է արտեղի անդամների բաժանորդագրութեան բոլոր հաշիւարկները:

ՓՈՒՆԱՌՈՒԹՅՈՒՆՆ ԾԵՆԱՏՆՏԵՍՆԵՐԻ ՄԵՋ ԻՐԱՅՆԵՐԻ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Մենատնտեսներին պարտատոմսեր վաճառելու պայմանները

27. Մենատնտես գյուղացիներին պարտատոմսեր վաճառելու կատարվում է կանխիկ հաշիւով, պարտատոմսի արժեքի միանգամ վճարումով: Պարտատոմսերը վաճառվում են իրենց վրա նշանակած գներով:

Ինչպես է կատարվում պարտատոմսերի վաճառքը մենատնտես գյուղացիներին

28. Պարտատոմսերը մենատնտեսներին վաճառում են գյուղխորհուրդներն իրենց կամ Գյուղխորհրդի և կամավոր ընկերու-

թյունները ակտիվացնելու ներգրավված գործակալների միջոցով: Գյուղական խնայողամարկղները գյուղխորհուրդների ղեկավարութեամբ նույնպես պարտատոմսեր են վաճառում կանխիկ հաշվով: Գյուղ-խնայողամարկղները պարտատոմսեր ստանում են շրջանայղբա-մարկղից և այդ պարտատոմսերի իրացման համար հաշվետվու-թյուն են ներկայացնում շրջանայղբամարկղներին:

Գյուղխորհուրդը վորոշում է մենատնտեսներին պարտատոմ-սեր վաճառելու աշխատանքում իր գործակալների և գյուղական խնայողամարկղների ունենալիք մասնակցութունը: Յուրաքան-չուր գործակալ և գյուղական խնայողամարկղ պարտատոմսերի վաճառքն անց է կացնում միմիայն իրեն հատկացրած տեղամա-սում:

Գործակալները պարտավորութուն են տալիս Գյուղխորհու-րդին №3 ձևի համաձայն: Պարտավորութունն ստորագրվում է յեր-կու որևիակ, վորոնցից մեկ պահվում է Գյուղխորհուրդում, մյուսը տրվում է գործակալին:

29. Պարտատոմսերի վաճառքից ստացած գումարները գործա-կալները Գյուղխորհուրդին են հանձնում յերեք օրը մեկ անգամ: Գործակալների հետ յեղած հաշվարկների գրանցումները տարվում է Գյուղխորհուրդի կողմից հոգւած 35-րդում ցույց տված կարգով:

30. Յեթե մենատնտեսները ձեռք բերվելիք պարտատոմսերի արժեքն ուղում են վճարել մի քանի ժամկետում, ապա պարտա-տոմսերի վաճառքը գյուղխորհուրդների կողմից կատարվում է հե-տևյալ կերպ՝ կադմվում է պարտատոմսեր գնողների ցուցակը, ուր մատնանշվում է՝ ա) գնողի ազգը, անունը և հայրանունը, բ) ձեռք բերվելիք պարտատոմսերի դումարը, գ) առաջին վճար-ման գումարը, դ) հետագա վճարումների ժամկետներն ու չափը մյուս պարտատոմսերի ցանկացած գումարի լրիվ վճարումը և յե) գնողի անհատական ստորագրութունը: ցուցակը կադմելու մո-մենտին մենատնտեսից պիտի ստացված լինի առաջին վճարը, վո-րը նշանակվում է ցուցակում: Ինչպես առաջին, նույնպես և հետա-գա վճարումներից պմեն մեկը պետք է ծածկի մեկ կամ մի քանի պարտատոմսերի արժեքը (10, 20, 25 ուրլի և այլն), վորոնք հանձ-նրվում են մենատնտեսների ձեռքը: Մենատնտեսների հետ այս ձևի հաշիվներ պահելիս վոչ մի կորոն նրանց չի տրվում:

Հետագա մուծումների ժամկետներն ու չափերը, վորոնք ան-պայման նշանակվում են ցուցակում, վորոշվում են մենատնտես-ների հետ համաձայնության դալով: Մենատնտեսների ձեռք բեռած պարտատոմսերի վերջին լրիվ վճարման սահմանային ժամկետը վորոշվելու յե 1932 թվի սեպտեմբերի մեկից վոչ ուչ:

31. Կուլակների մեջ փոխառության իրացումը կատարվում է նրանց կայուն առաջագրանք տալու կարգով: Առանձին կուլա-կային տնտեսութունների առաջագրանքը սահմանում են գյուղա-կան ուսումնական հանձնաժողովները, կորտնտեսական, չքավորական և միջակային ակտիվի հետ միասին:

32. Գյուղխորհուրդը պարտատոմսերը մենատնտեսներին վա-ճառելու համար ստանում է այն խնայողամարկղից, վորին նա կցված է: Պարտատոմսերը Գյուղխորհուրդին տրվում են ավան-սով: Ավանսը լրացվում է ծախսվելուն պես այն հաշվով, վորպես-ղի Գյուղխորհուրդը կարողանա անընդհատ շարունակել փոխա-ռությունը տարածելու իր աշխատանքը:

Շրջանայղբամարկղը պետք է կտրի պարտատոմսերի կցման տալոնները, վորոնք կանխիկ հաշվով վաճառելու համար են վերց-վում:

Կցման տալոնները կտրելիս պետք է հետևել, վոր սխալմամբ չկտրվեն շահումն ստանալու իրավունք տվող ստուգիչ տալոնները:

Պարտատոմսերից կցման տալոնները կտրելու հետևելու աշ-խատանքը Շրջանայղբամարկղը պետք է դնի առանձին աշխատա-կցի վրա:

Գյուղխորհուրդների գործակալների և լիազորների պատաս-խանատվությունը

32. Գյուղխորհուրդները նյութապես պատասխանատու յեն ԽՍՀՄ Ֆինիստրիկոմատի առջև պարտատոմսերի և պարտատոմսերի վաճառքից ստացած դրամների պահպանման ու ամբողջության համար, ինչպես և պատասխանատու յեն ԽՍՀՄ Ֆինիստրիկոմատի առջև գործակալների և լիազորների ընտրության և նրանց աշխա-տանքին հսկելու համար:

Լիազորները և գործակալները պատասխանատու յեն իրենց ու-նեցվածքով Ֆինիստրիկոմատի մարմինների առջև պարտատոմսերի վաճառքից ստացված դրամների պահպանման, դրամները ժամա-նակին Գյուղխորհուրդին հանձնելու, ինչպես և Գյուղխորհուրդից ստացված պարտատոմսերի պահպանման համար:

ԽՍՀՄ Ֆինիստրիկոմատը բաժնեգրիներին և պարտատոմսերի գնորդներին առաջ պատասխանատվություն է կրում, լիազորներին և գործակալներին և նրանց միջոցով գույքխորհուրդներին հանձն-վող դրամների պահպանման և ամբողջության համար, հավա-սար չափով պատասխանատու յե Գյուղխորհուրդներին, իսկ նրա միջոցով բաժնեգրիներին հանձնելու համար լիազորներին և գոր-ծակալներին տրվող պարտատոմսերի համար:

ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ  
ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՔԻ, ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ  
ՅԵՎ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

Պարտատոմսերի հաշվառումը

34. Կանխիկ հաշվով վաճառելու համար ստացած պարտա-տոմսերի հաշվառումը Գյուղխորհուրդը տանում է № 6 ձևի



տեղեկագրով, բայց փորձում կոլտնտեսականներին կանխել հաշվով վաճառած պարտատոմսերը հաշվի չեն առնվում մենատնտեսներին վաճառումից առանձին և ավելացվում են կոլտնտեսիտորի բաժնեգրութան և դրամների մուտքին: Այդ տեղեկագրերը Գյուղխորհրդի կողմից տարվում և յերկու սրինակից, փորոնցից մեկը հատկացվում և փոխառութան շահող բաժնի պարտատոմսերին, իսկ մյուսը—տոկոսաբեր բաժնի պարտատոմսերի հաշվառման համար:

3-րդ սյունյակում գրվում են՝ ա) խնայող բաժնեգրներից ստացված պարտատոմսերը, բ) Գյուղխորհուրդների գործակալներին կողմից վերադարձված պարտատոմսերը, նշելով 2-րդ սյունյակում կոնտրագենտների անունները: 6-րդ սյունյակում գրվում են՝ ա) գյուղացիներին կանխել հաշվով ծախած պարտատոմսերը, բ) 7-րդ սյունյակով գործակալներին ստորագրութամբ բաց թողած պարտատոմսերը և գ) խնայող բաժնեգրների վերադարձրածները:

#### Հաշվարկներ գործակալների հետ:

35. Գործակալների հետ ունեցած հաշվարկները Գյուղխորհուրդը վարում և ձև № 3 պարտավորագրի հետին յերեսում անձնական հաշիվներում:

Յեթե գործակալին ծախելու համար բաց և թողնվում փոխառութան յերկու բաժնի պարտատոմսերից էլ, ապա, աչգալիս գործակալի համար Գյուղխորհուրդը բացում և յերկու անձնական հաշիվ, փորոնցից մեկը փոխառութան շահող բաժնի հաշիվների, մյուսը—տոկոսաբեր բաժնի հաշիվների համար: Այս դեպքում ողտագործվում և № 3 ձևի յերկրորդ բլանկը: Գործակալներին արված պարտատոմսերը Գյուղխորհուրդը գրում և անձնական հաշիվ 2-րդ սյունյակում: Անձնական հաշիվ 4-րդ սյունյակում գրվում են գործակալների վերադարձրած պարտատոմսերը:

Կանխել հաշվով վաճառած պարտատոմսերի դիմաց գործակալներից ստացվող դրամական գումարները Գյուղխորհուրդը գրում և գործակալների անձնական հաշիվների 3-րդ սյունյակում յուրաքանչյուր գրութունից հետո պարտքի մնացորդը մատնանշելով 5-րդ սյունյակում՝ համաձայն գործակալի հայտարարութան՝ ծախելուց ստացած հանձնելիք գումարները փոխառութան շահող բաժնի և տոկոսաբեր բաժնի պարտատոմսերի մեջ բաշխելու մասին:

Գործակալի անձնական հաշիվի մեջ կատարված բոլոր գրութունները վավերացվում են Գյուղխորհուրդի նախագահի և քարտուղարի ստորագրութամբ:

Պարտատոմսերի վաճառքից ստացված դրամների հաշվառքը Գյուղխորհուրդում

35. Փոխառութունից ստացված գումարներու Գյուղխորհուրդը մուտք և գրում իր սրվա յեկամուտի հանրագումարներում՝ դրամա-

կան (գանձարկի) գրքի «ալլ գումարներ» սյունյակում: Այդ նույն գումարները գրվում են «գանազան գումարներ» գրքում (ինքնուրույն բյուջե ունեցող գյուղխորհուրդներում—«գանազան անձնայու հիմնարկների հաշիվներ» գրքում) սակայն բաժանելով փոխառութան շահող բաժնի և տոկոսաբեր բաժնի պարտատոմսերի վաճառքից ստացված գումարներին: Դրա համար «գանազան գումարներ» գրքում բացվում և յերկու անձնական հաշիվ: Գյուղակալ խնայող բաժնեգրին հանձնած, կամ չըջխնայող բաժնեգրի պետական-ոսթյունների սեկտորին (նայած, թե փորին և կցված Գյուղխորհուրդը) փոստով փոխադրած գումարները գուրս են գրվում իր բաժնի յինչպես «գրամական գրքում», նույնպես և «գանազան գումարներ» գրքում:

Փոխառութան պարտատոմսերն յինչպես և փոխառութան վաճառքից ստացված դրամները մինչև հանձնելը կամ խնայող բաժնեգրին ուղարկելը պահում և Գյուղխորհուրդը՝ Գյուղխորհրդի դրամական գումարների պահպանման համար հաստատված բնահանուր կարգով:

Գյուղխորհուրդների հաշիվները պետաշխխնայող բաժնեգրներին հետ:

36. Գյուղական խնայող բաժնեգրներին կցված Գյուղխորհուրդները փոխառութունից ստացված բոլոր գումարներն ուղարկում են փոստային փոխադրման մեջնցով խնայող բաժնեգրի պետական-ոսթյունների սեկտորին յուրաքանչյուր ամսի 3, 8, 13, 18, 23 և 28-ին:

Փոստային ծախսերը Գյուղխորհուրդները ծածկում են փոխառութունն իրացնելու համար իրենց ստացած վարձատրութունից (տես 41-րդ հոդվածը):

Դրամները հանձնվում են հետևյալ հայտարարութամբ:  
«Հնգամյակի չորրորդ, ավարտական տարվա» փոխառութան վերաբերյալ . . . Գյուղխորհուրդից:  
Կոլտնտեսականների բաժնեգրութունից . . . Ռուր.  
Կոլտնտեսականների բաժնեգրութունից . . . Ռուր.  
Շահող բաժնի պարտատոմսերի վաճառքից . . . Ռուր.  
» . . .  
Տոկոսաբեր . . .  
Ընդամենը . . . Ռուր.

Այն, ամսաթիվ, տարի

Գյուղխորհուրդի ստորագրութունը

Դրամները փոստով փոխադրելու դեպքում այդ հայտարարութունը մատնանշվում և փոստային փոխադրումների «գրավոր հաղորդագրութան համար» բլանկում: Գյուղխորհուրդը ստանում և իրեն սպասարկող խնայող բաժնեգրից բոլոր անհրաժեշտ բլանկներ և ձևեր՝ հաշվառքի ստացագրեր և նրա արժաններ կոլտնտեսիկներին բաժանելու համար (ձև № 2), գործակալների պարտավորագրերը (ձև № 3), գանձումներ կատարող լիազորների պարտա-

վարդերը (ձև № 4), կոլտոգնիկների հետ հաշիվ տեսնելու համար ցուցակներ (ձև № 5), պարտատոմսերի յեւթի և մուտքի ցուցակները (ձև № 6) :

### ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԳԱՆՁՎՈՂ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎՐԱ ՀԱՅՐԱՐԱԿԱՆ ՀՍԿԱՅԻՆՈՒԹՅՈՒՆ

38. Փոխառության կամ պանիայի և պարտատոմսերի իրացման հաշիվների տմբողջ ժամանակաշրջանում սահմանվում է ստենախիստ հակոդությունը փոխառության դրամների չարժման լնթացքի նկատմամբ սկսած լիազորներից և կոնտրագենտներից մինչև խնայողամարկող :

Հաշիվները ճիշտ և ժամանակին կատարելը, լիազորների, կոնտրագենտների, դյուլիսորհուրդների և խնայողամարկողների կողմից ժամանակին դրամներ հանձնելը ստուգելու համար պետք է պարբերաբար առանձնացնել հաշվարկական բրիդադներ : Շրջֆինրադիկների դեկալարուիլումս ս.դ. բրիդադները հետապնդում են փոխառության հաշիվների դրությունը լամբողջ շրջանում :

Ինչպես չրջոթանդակ հանձնադրութները, նույնպես և չրջկոլտնտեսություններին, կոլտնտեսություններին կից ոթանդակ հանձնադրութները պետք է մշտական հսկողություն ունենան, վորպեսզի փոխառության դիմաց մուտք յեղող գումարները չման գործակալների լիազորների, գյուլխորհուրդների և խնայողամարկողների մոտ, ալլ ժամանակին հանձնվեն ֆինսոդկոմատի հաշվին :

### ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ԻՐԱՑՈՒՄԸ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՄԵՋ

39. Գյուղական ձեռնարկների և հիմնարկների (այդ թվում և ՄՏԿայանների և խորհատեսութ.) բանվորների և ծառայողների մեջ անց է կացվում փոխառության կոլեկտիվ բաթանորդագրություն, քաղաքի բանվորների և ծառայողների կոլեկտիվների հետ միանման պայմաններով : Գյուղական վայրերի բանվորները և ծառայողները փոխառությանը բաթանորդագրութում են իրենց ոթանդակ հանձնադրութների միջոցով, և պարտատոմսերի արժեքը վճարում են իրենց ձեռնարկների ու հիմնարկների վարչությունների միջոցով, մաս-մաս, մինչև 1933 թ. մայիսի 1-ը : Բանվորների և ծառայողների կոլեկտիվ բաթանորդագրման կարգն ու պայմանները մատնանչված են իմ շրջֆինսոդկոմատի 1932 թ. մայիսի № 203 «Բաղաքային աղգարհակության մեջ փոխառությունն իրացնելու» վերաբերյալ հրահանգի մեջ : Այդ հրահանգով պիտի ղեկավարվեն գյուղի բանվորների և ծառայողների մեջ կոլեկտիվ բաթանորդագրություն անցկացնելու մասնակցող բոլոր հիմնարկներն ու ձեռնարկները :

### ՓՈԽԱՌՈՒՅՄԱՆ ԽԱՐԱԾՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԽԱՄԱՐ ԿԱՐԳԼԱՏՐՈՒՄ

40. Գյուղական վայրերում փոխառության իրացման աշխատանքի համար պարգևատրվում են. — ա) Շրջանային ոթանդակ հանձնադրութներին, մենատնտեսներին վաճառած պարտատոմսերից մուտք յեղած գումարից և չրջանի տերիտորիայում բանվոր ծառայողների կոլեկտիվ բաթանորդագրության գումարից 0,15% -ի չափով : բ) Շրջկոլտնտմիության կից ոթանդակ հանձնադրութին 0,15% չրջանի կոլտնտեսականի բաթանդրված գումարից : գ) Գյուլխորհուրդներին, — վորոնք կոլտնտեսականների բաթանդրման հաշվարկներն են տանում 1%, կոլտնտեսականների բաթանդրությունից մուտք յեղած գումարից և գրանից բացի 1% — ինչպես գյուլխորհուրդների, նույնպես և գործակալների կողմից մենատնտեսներին վաճառած պարտատոմսերի համար ստացած գումարից :

Գյուլխորհուրդը կոլխոդին կից ոթանդակ հանձնադրութին և տալիս այն գումարի 0,25 տոկոսը (տոկոսի մեկ քառորդը) վորն ստացել է կոլտնտեսականների բաթանդրությունից և ակտիվիտետների միջոցով մենատնտեսներին վաճառած պարտատոմսերից, այն ակտիվիտետների, վորոնց առանձնացրել եր ոթանդակ հանձնադրութը, իրր Գյուլխորհուրդի գործակալներ և վորոնք նրա ղեկավարությամբ անցկացրին պարտատոմսերն մենատնտեսների մեջ տարածելու աշխատանքը :

Կոլտնտեսություններին կից ոթանդակ հանձնադրութները ալլ միջոցներն ոգտագործում են, Գյուլխորհուրդներին լիազորներին, վարչության անդամներին, փոխառության ակտիվիտետներին պարգևատրելու համար. դ) Տնայնագործական արտելները վարչություններին, վորոնք արտելի անդամների բաթանդրության հաշվարկներն են տանում, վարձատրություն տրվում է անդամների բաթանդրությունից մուտք լինող գումարի մեկ տոկոս :

Նչված վարձատրությունները Գյուլխորհուրդներին և տնայնագործ արտելներին տալիս են այն խնայողամարկղները, վորոնք փոխառության հարցում սպասարկում են տվյալ Գյուլխորհուրդներին, արտելներին : Այդ վարձատրությունները տրվում են յերկու նվազում՝ Գյուլխորհուրդներին — կոլտնտեսականների բաթանդրության համար և տնայնագործ արտելներին — վարձատրության կեսը տրվում է բաթանդրության ձեակերպելուց հետո, մնացած մասը — բաթանդրության հաշվարկների ավարտելուց հետո : Գյուլխորհուրդներին մենատնտեսներին պարտատոմս վաճառելու գծով տրվում է 1932 թվի հոկտեմբերի 1-ից 1% մինչև ալլ վաճառած և մուտք յեղած գումարից : յերկրորդ անգամ վարձատրություն տրվում է 1% 1932 թ. հոկտեմբերի 1-ից մինչև իրացման վերջ Գյուլխորհուրդների տարածած պարտատոմսերի գումարից :

Շրջանային ոթանդակ հանձնադրութները և չրջկոլտնտմիության կից ոթանդակ հանձնադրութներին վարձատրություն տրվում է չրջխնայողամարկղի կողմից նույնպես 2 նվազում : առաջին

անդամ վարձատրություն տրվում է ավանսով ներկա հրահանգը ստանալուն պես. ավանսը սահմանվում է ոժանդակ հանձնաժողովների հասնող վարձատրության 50 տոկոսի չափով, յեղնելով փոխառության տարածման ստուգիչ թվից: Յերկրորդ անդամ վարձատրություն տրվում է բաժնեգրության բոլոր հաշվարկների ավարտման վերջում:

Ծրջանային ոժանդակ հանձնաժողովները և շրջկոլտնտնությունների կից ոժանդակ հանձնաժողովները ստացվող վարձատրությունը դարձնում է ստորադաս ոժանդակ հանձնաժողովներին, առանձին ակտիվիստներին և այլն փոխառության տարածման լավագույն աշխատանքի համար պարգևատրելու ֆոնդ, ինչպես և ոգտադործում են փոխառության աշխատանքը տանելու ծախքեր ծածկելու համար:

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒԹՅՈՒՆ ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՋՈՂ ՅԵՎ ՈՐԻՎԱԿԵԼԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՐ:

41. Փոխառության մասսայական-քաղաքական լավագույն աշխատանքի որինակների փոխառության իրացման հաջող հետևանքների համար պարգևատրվում են, պետվարկի և խնայգործի ոժանդակ հանձնաժողովները, հասարակական կազմակերպությունները, առանձին կոլտնտեսությունները, կոլեկտիվները և ապարատը, ինչպես և առանձին ակտիվիստները (ոժանդակ հանձնաժողովներ, հասարակական հրահանգիչները, գործակալները և այլն):

Ծրջանային ոժանդակ հանձնաժողովները և շրջկոլտնտնություններին կից ոժանդակ հանձնաժողովները, հայտնաբերում են փոխառության իրացման հարցում իրենց աշխատանքով լավագույն ստորադաս ոժանդակ հանձնաժողովներին (գ. խ., կոլ. տնտ. կից և այլն), հասարակական կազմակերպություններին, առանձին կոլեկտիվներին և այլն, նրանց պարգևատրման ներկայացնելու համար:

Գյուղխորհուրդներին, կոլտնտեսություններին, խորհանտեսություններին, ՄՏԿայաններին և այլին կից ոժանդակ հանձնաժողովները իրենց հերթին հայտնաբերում են փոխառության աշխատանքում լավագույն աշխատանք ցույց տված առանձին ակտիվիստ հարվածայիններին և ներկայացնում են նրանց պարգևատրման:

Պարգևատրման պայմաններն ու կարգը սահմանվում են պարգևատրման առանձին կանոնադրությամբ, փորը հաստատված է ԽՍՀՄ ԿԳԿ Նախագահության կից պետվարկի և խնայգործի կենտրոնական ոժանդակ հանձնաժողովի կողմից:

ԽՍՀՄ Ֆինանսականության նախարարի անդամ՝ պետ. աշխխնայդրամարկային և պետվարկի գլխավոր վարչության պետ՝ (ԼԻՎՖՇԻՑ) «Համաձայնեցված է ԽՍՀՄ Կոլտնտնականության հետ» ԽՍՀՄ Լուսնուկեցությունի վարչության նախագահի ստորագրությամբ (ՖԵԴՈՐԵՑ)



ՀՀ Ազգային գրադարան



27929

336.3  
Խ - 11

Սրբազան Պ. Մկրտչյան,

Հայկաբերդյան տպարան

Գրավիտ № 6171 (բ), Պատվեր № 2358, Տիրած 1500.

Հանձնված է տպագրության, 24 հունիսի 1932 թ.  
Ստորագրված է տպագրելու 11 սեպտեմբերի 32 թ.